ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 03.01.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից հավաքվող թափոնների իրացումից և ծառայությունների մատուցումից 2022 թվականին ստացվել է 44698,8 հզ.դրամի չափով և 2023 թվականին՝ 44550,7 հզ դրամի չափով եկամուտ: 2022 թվականին թափոնների իրացումից եկամուտը կազմել է 39933,0 հզ. դրամ, կանաչապատման ծառայությունների մատուցումից՝ 4765,0 հզ. դրամ: 2023 թվականին թափոնների իրացումից եկամուտը կազմել է 40630,7 հզ. դրամ, կանաչապատման ծառայությունների մատուցումից՝ 3920,0 հզ դրամ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ թափոնների վաճառքը իրականացվել է օրենքով սահմանված կարգով կազմակերպված աճուրդների միջոցով, որը հրապարակային է և դրա վերաբերյալ բոլոր նյութերը տեղադրված են azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում և «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ֆեսբույքյան էջում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ